
ՀՀ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԷՂԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հասարակության զարգացման հարցում տեխնոլոգիաների վճռորոշ դերը հատկապես լավ է արտահայտվում տեղեկատվության ոլորտում: Տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանակակից հասարակության համակարգաստեղծ բաղկացուցիչներ են և մի շարք հասարակական փոփոխությունների պատճառ են դարձել: Արդյունաբերական հասարակական կարգից անցում է կատարվել տեղեկատվական հասարակություն: Որպես հասարակության զարգացման կարևորագույն ցուցիչ հանդես է գալիս տեղեկատվական ոլորտում այս կամ այն հասարակության նորարարական հնարավորությունների կիրառման արագությունը¹:

Հայաստանում պետական կառավարման համակարգի գործառնության ին բարեփոխումները վերջին տարիներին նշանակալի առաջընթաց ապահովեցին թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության ուղղությամբ: Հանրային կառավարման որակի բարձրացումը ոչ միայն կառավարման ժողովրդավարացման վկայություն է, այլև առանցքային դեր ունի ցանկացած երկրի սոցիալական և տնտեսական զարգացման գործում: Կառավարման համակարգի զարգացումը ներառում է հանրային կառավարման կառուցվածքային և գործառնության ին բարեփոխումները, պետական ծառայության ու տեղական ինքնակառավարման ինստիտուտների կատարելագործումը և հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումները: Չնայած 2008-2011 թթ. հանրային կառավարման համակարգի բարեփոխումների անբավարար ընթացքին՝ ՀՀ կառավարությունն այս բնագավառում մեծ նարտահրավերներ է տեսնում և միջնաժամկետ ու երկարաժամկետ զարգացման ռազմավարական ծրագրերում հավակնոտ նպատակադրումներ և թիրախներ է սահմանում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի սրընթաց զարգացումը կարող է նպաստել պետություն-հասարակություն կապի սերտացմանը: Համացանցն ավելի արդյունավետ, արագ և տնտեսապես հարմար միջոց է պետական մարմինների արդյունավետ գործունեության և նոր տեխնոլոգիաներով կառավարում իրականացնելու համար, և պատահական չէ, որ առաջատար երկրների կառավարման համակարգերն ապահովված են արդիական սարքավորումներով²:

¹ Տե՛ս **Федорова Т. С.** Национальные модели информационного общества // http://www.ifapcom.ru/files/Monitoring/fedorova_nac_modeli.pdf

² Տե՛ս **Волошин Д. В.** Интернет-технологии в подготовке специалистов в области межкультурных коммуникаций // "Вестник Московского государственного университета культуры и искусств", 2010, № 1, էջ 189-191, **Раскладкина М. К.** Интернет как информационная среда и особенности работы журналиста в эпоху новых медиа // "Образовательные технологии и общество" (Educational Technology & Society), 2004, № 2, էջ 247-256, **Ильин А. Н.** Интернет как альтернатива политически ангажированным СМИ // "Полис" (Политические исследования), 2012, № 4, էջ 126-136:

ՀՀ-ում ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ համացանցը հասանելի դարձավ բնակչության 37 տոկոսին, ինչը տարածաշրջանի մյուս երկրների համեմատ (Ադրբեջան, Վրաստան, Իրանի Իսլամական Հանրապետություն) ամենաբարձր ցուցանիշն է: Այն ավելի է մոտեցել առաջատար համարվող Թուրքիայի ցուցանիշներին, որտեղ համացանցին միանալու հնարավորություն ունի բնակչության 40 տոկոսը: Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU) 2011 թ. զեկույցում Հայաստանը նշված էր որպես հեռահաղորդակցության ոլորտում ամենադինամիկ զարգացող երկիր: Այսպես, 2008-2010 թթ. ընթացքում Հայաստանը բարելավել է տեղեկատվական և հաղորդակցության զարգացման ինդեքսի իր ցուցանիշները (ICT development index (IDI)՝ 31 տոկոս՝ 86-րդից բարձրանալով 72-րդ հորիզոնական³:

Յուրաքանչյուր տնտեսություն դեպի էլեկտրոնային կառավարում անցում կատարելիս յուրովի է մշակում իր համակարգը՝ սեփական օրենքներին ու նորմերին համապատասխան կիրառելով այնպիսի գործիքներ, որոնք ի վերջո հանգեցնում են նախ ժամանակի, ապա այլ ռեսուրսների խնայողության: Էլեկտրոնային կառավարման մոդելները տարբեր են, քանի որ դրանք կախված են կոնկրետ ծառայությունների, իշխանության և հասարկության միջև եղած հարաբերությունների բնույթից և մտածողությունից⁴:

ՀՀ-ում հանրային կառավարման ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունն առաջացավ հորհրդային Միության փլուզումից և շուկայական տնտեսության անցնելուց հետո: 1999 թվականին վարչապետի որոշմամբ ստեղծվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողով, որը մշակեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հայեցակարգ.

- հանրային կառավարման համակարգում կառուցվածքային և գործառնության բարեփոխումներ,
- քաղաքացիական ծառայության ստեղծում,
- բարեփոխումներ հանրային ֆինանսական մեքենայի համակարգում:

Բարեփոխումներն իրականացվում էին քաղաքական համակարգի փոփոխությանը զուգահեռ և հասարակական կարգի փոփոխության արդյունք էին, ուստի անհրաժեշտ էր նաև ստեղծել տնտեսական և հասարակական հարաբերություններին համապատասխան պետական կառավարման համակարգ: Այս բնույթի բարեփոխումներից էին նոր օրենսդրության մշակումը, պետական մեքենայի նորովի վերակազմակերպումը, պետական-քաղաքացիական ծառայության ներդրումը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման և

³ Տե՛ս «Measuring the Information Society», Printed in Switzerland Geneva 2011, ISBN 92-61-13801-2 <http://www.itu.int/net/pressoffice/backgrounders/general/pdf/5.pdf>

⁴ Տե՛ս **Бобров А. М.** Еще раз к вопросу об определении понятий «электронная демократия» и «электронное правительство» // "Вестник Российского университета дружбы народов". Серия: Политология. 2009, № 2, էջ 26-36, **Султанов К. В.** Электронное правительство и эффективность взаимодействия власти и общества в эпоху глобализации // "Известия Российского государственного педагогического университета", 2009, № 104, էջ 66-76, **Элькаим Ж.** Электронное правительство и эффективность государственных служб // "Вопросы управления", 2010, № 12, էջ 7-8:

զարգացման գործընթացները և այլն⁵: Կառավարման համակարգի գործառնության բարեփոխումներից առավել ուշադրություն է դարձվում արդիական երկու ուղղության՝ էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրմանը և տեսչական համակարգի օպտիմալացմանը:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կյանքի կոչվեցին զանազան ծրագրեր, որոնցով նախատեսվում էր իրականացնել կառավարման համակարգի այնպիսի բարեփոխումներ, որոնց շնորհիվ արդեն 2012 թ. այդ համակարգը բնութագրող ցուցանիշները պետք է գերազանցեին Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրների 2006 թ. նակարդակը: Սակայն ֆինանսատնտեսական գլոբալ ճգնաժամը խանգարեց ամբողջովին իրագործելու հանրային կառավարման բարեփոխումների դեռևս կայուն զարգացման ծրագրով նախանշված հիմնական կետերը: Այդ է պատճառը, որ կառավարման համակարգը բնութագրող ցուցանիշներն այսօր չեն հասել իրենց թիրախային մեծությանը:

ՀՀ կառավարության բարեփոխումները երկրի զարգացման գործում և հետագա տարիներին հանրային կառավարման հիմնական ցուցիչները ունենալու են հետևյալ արժեքները (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հանրային կառավարման հիմնական ցուցանիշների թիրախային արժեքները 2017, 2021 և 2025 թթ.⁶

Կառավարման ցուցանիշներ	Տարի	Տոկոսային գնահատականը (Ծրագրային ցուցանիշներ, 0-100)
Քաղաքացիական հասարակության մասնակցությունը իշխանությունների ձևավորման գործընթացում, խոսքի և մամուլի ազատություն	2025	90
	2021	75
	2017	64
Քաղաքական կայունություն	2025	80
	2021	70
	2017	57
Կառավարման արդյունավետություն	2025	90
	2021	75
	2017	62
Կառավարության կարգավորման գործառնության որակ	2025	90
	2021	80
	2017	69
Օրենքի գերիշխանություն	2025	80
	2021	70
	2017	60
Կոռուպցիայի վերահսկելիություն	2025	80
	2021	70
	2017	58

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայությունը 2002-2012» // ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, Եր., 2011, էջ 7:

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2012-2025 հեռանկառային գաղափարային ռազմավարական ծրագիր», աղյուսակ 36, էջ 137, www.mfe.am/index.php?f=78&lang=1

ՀՀ կառավարման համակարգը բնութագրող ցուցանիշների երկարա-
ժամկետ նպատակային արժեքներ են սահմանվում զարգացած երկրների
Տնտեսական կոոպերացման և զարգացման համագործակցության կազ-
մակերպությունների (Organisation for Economic Co-operation and
Development OECD)* համապատասխան ցուցանիշները 2010 թ. համար,
իսկ 2021 թ. ցուցանիշները կարևոր փուլ են այդ վերջնական նպատակին
հասնելու ճանապարհին: Այստեղ բացառություն են կազմում միայն օրեն-
քի գերիշխանությունը և կոռուպցիայի վերահսկելիությունը բնութագրող
ցուցանիշները, որոնց նպատակային արժեքները մոտ 10 տոկոսով զիջում
են OECD երկրների նույնանուն ցուցանիշներին, նկատի ունենալով ներ-
կայունս դրանց մեծ խզվածությունը, ինչպես նաև հասարակության մեջ
օրենքի գերիշխանության հաստատման հետ կապված որոշակի ժամանա-
կաշրջանի անհրաժեշտությունը⁷:

Պետական կառավարման համակարգի բարեփոխումների շնորհիվ
հստակեցվեցին նաև նախարարությունների կանոնադրությունները, միաս-
նականացվեցին նրանց աշխատակազմերի կառուցվածքները՝ ստեղծելով
վարչություններ, քարտուղարություններ և բաժիններ: Էական հաջողու-
թյուններ գրանցվեցին հատկապես էլեկտրոնային կառավարման բնագա-
վառում: Պետության կողմից մատուցվող ծառայությունների էլեկտրոնային
համակարգի ներդրումը մի կողմից բարձրացնում է պետական կառավար-
ման համակարգի գործունեության հրապարակայնությունը, հաշվետվողա-
կանությունը և թափանցիկությունը, իսկ մյուս կողմից նվազեցնում է կո-
ռուպցիոն ռիսկերը պետական ծառայողների և մասնավոր հատվածի միջև
ուղղակի և անձնավորված շփումների էական կրճատման շնորհիվ:

Էլեկտրոնային կառավարման համակարգի կարևորությանն են անդ-
րադարձել ռուս բազմաթիվ վերլուծաբաններ⁸, որոնք վեր են հանել էլ. կա-
ռավարման մի շարք առավելություններ՝ նշելով դրանց կարևորությունը պե-
տական վարչարարության համար, որի շնորհիվ կառավարման գործունեու-
թյունը դառնում է առավել վերահսկելի, քանի որ քաղաքացիների համար
հնարավորություն է ստեղծվում մասնակցելու կառավարման գործընթացին:
Էլեկտրոնային կառավարումն ունի հետևյալ հիմնական նպատակները.

* Այս համագործակցության կազմում են աշխարհի 34 զարգացած երկրներ: Այն
ստեղծվել է 1961 թ.-ին՝ խթանելու տնտեսական առաջընթացը և համաշխարհային
առևտուրը: Դա ժողովրդավարությանը և շուկայական տնտեսությանը նվիրված երկրնե-
րի ֆորում է, որն ապահովում է հարթակ՝ համեմատելու անդամ երկրների ներքին և ար-
տաքին քաղաքականության տարբեր փորձերը:

⁷ Տե՛ս http://armef.com/news/category/comment/article/article_1363934248

⁸ Տե՛ս **Андрианов В. Д.** Электронное правительство как инструмент повышения ка-
чества и эффективности государственного управления // "Сегодня и завтра Российской
экономики", 2011, № 48, էջ 5-14, **Штрик А. А.** Критерии, показатели и методики оценки
эффективности электронных правительств // "Информационные технологии", 2011, № 4,
էջ 1-32, **Андрианов В. Д.** Электронное правительство как инструмент повышения качества
и эффективности государственного управления // "Горизонты экономики", 2011, № 1, էջ
21-26, **Красильникова Е. В.** Экономические издержки и результаты реализации концеп-
ции электронного правительства в россии // "Вестник Поволжской академии государствен-
ной службы", 2010, № 4, էջ 18-27, **Дианова Е. М.** Электронное правительство как меха-
низм воздействия на транзакционные издержки в государственном секторе // "Информаци-
онное общество", 2012, № 4, էջ 34-41:

- բնակչությանը և գործարարությանը կառավարչական ծառայությունների մատուցման օպտիմալացում,
- երկրի ղեկավարման և կառավարման գործընթացում բոլոր ընտրողների մասնակցության աստիճանի բարձրացում,
- քաղաքացիների ինքնասպասարկման հնարավորությունների պահպանում և ընդլայնում,
- քաղաքացիների տեխնոլոգիական իրազեկման և ուսուցման աճի ապահովում,
- աշխարհագրական տեղակայության գործոնի փոխազդեցության նվազեցում⁹:

Այսպիսով, էլեկտրոնային կառավարման իրականացումը ոչ միայն պետք է ապահովի առավել արդյունավետ և քիչ ծախսատար վարչարարություն, այլ նաև հասարակության և կառավարության միջև փոխհարաբերությունների արմատական փոփոխություններ: Վերջին հաշվով սա հանգեցնում է ժողովրդավարության կատարելագործմանը և ժողովրդի առջև կառավարության պատասխանատվության բարձրացմանը: ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության կայացման և զարգացման համար 2012 թ. մշակվել է եռամսյա աշխատանքային հայեցակարգ՝ հաշվի առնելով աշխարհի առաջատար երկրների՝ այդ ոլորտում գրանցած նվաճումներն ու արդյունքները:

- Եվ այսպես, ՀՀ-ում իրականացվել են հետևյալ կարևոր ծրագրերը՝
- էլեկտրոնային վիզաների ստացում,
 - ARCA էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրում,
 - «Mulberry» փաստաթղթերի էլեկտրոնային կառավարման համակարգին անցում,
 - էլեկտրոնային ստորագրություն,
 - փաստաթղթի և դիմումի ընթացքին էլեկտրոնային եղանակով հետևելու հնարավորություն,
 - բիզնեսի և քաղաքացիների համար առավել արդյունավետ պետական վարչարարություն,
 - հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ,
 - էլեկտրոնային թույլտվություններ և լիցենզիաներ,
 - էլեկտրոնային գնումներ,
 - բիզնեսի էլեկտրոնային գրանցում,
 - նույնականացման քարտեր (10-cards) և կենսաչափական անձնագրեր,
 - մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ,
 - մտավոր սեփականության գործակալության որոնման տեղեկատվական համակարգ,
 - ԴԱՀԿ էլեկտրոնային աճուրդի համակարգ,
 - Հայաստանի իրավական տեղեկատվության էլեկտրոնային համա-

⁹ Տե՛ս **Беспалов П.** «Электронное правительство» и компетентность госслужащих // "Государственная служба", 2002, № 5, էջ 139-146:

կարգ,

- անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգ,
- համացանցով հրապարակային ծանուցման պաշտոնական կայք,
- դատական տեղեկատվական էլեկտրոնային համակարգ և այլն¹⁰:

Զնայած էլեկտրոնային կառավարման ոլորտում արձանագրված էական առաջընթացին՝ մատուցվող հանրային էլեկտրոնային ծառայությունների առումով Հայաստանը դեռևս բավական հեռու է ԵՄ երկրներից: Այս ուղղությամբ կան բավականին անելիքներ: Ուսումնասիրելով այլ երկրների փորձը՝ Հայաստանը էլ. կառավարման զարգացման գործընթացում պետք է ուշադրությունը կենտրոնացնի ինովացիոն քաղաքականության, մարդկային կապիտալի, ֆինանսական և հարկային քաղաքականությունների, ինչպես նաև ներդրումային ծրագրերին: Ինովացիոն քաղաքականությունը բնագավառի հիմնական շարժիչ ուժն է:

Պետական տարբեր մակարդակի էլեկտրոնային կառավարման բաժինների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցները, ինչպես նաև դիտարկված և ուսումնասիրված այլ աղբյուրները հիմք են տալիս խոսելու ներկայումս ՀՀ պետական կառույցների էլ. կառավարման բաժինների գործունեության առանձնահատկությունների, օրինաչափությունների, ինչպես նաև այդ գործունեության վրա ազդող օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք գործոնների մասին, մասնավորապես.

- կարելի է ասել, որ ՀՀ պետական կառավարման համակարգում (բացառությամբ որոշ նախարարությունների) գոյություն չունի էլ. կառավարման էության, նպատակների ու նշանակության մասին միանշանակ ընկալում, պատկերն ավելի անմխիթարական է մարզային ՏԻՄ-ում,

- Հայաստանում ցանցային ծառայությունների ենթակառուցվածքը զարգացնելու համար անհրաժեշտ են պետական նախաձեռնություններ և շարունակական ներդրումներ: Երկու կողմից փակ սահմաններ ունեցող մեր երկրի համար այս անսահման տարածությունը կարող է տարբեր ուղորտներում ապահովել կայունություն, մրցունակություն՝ նպաստելով էլեկտրոնային բժշկության, կրթության, գիտության, առևտրի և մի շարք այլ կարևորագույն ոլորտների զարգացմանը,

- կենտրոնական և ճյուղային տեղեկատվական համակարգերը և ռեսուրսները միասնականացված չեն, իսկ համապատասխան գերատեսչական կապերը միացած չեն համացանցին և միմյանց,

- նոր ձևավորված էլ. կառավարման բաժինների գործունեության մեջ տեսանելի է հին բաժինների և նոր կառուցվածքային միավորումների գործառութային համադրություն,

- պետական համակարգում էլ. կառավարման համակարգի մասին մասնագիտական գրականության բացակայությունը,

- նախարարությունների և գործադիր այլ մարմինների էլ. կառավարման բաժինների միջև գործողությունների համակարգման անլիարժեքությունը,

- մարզային ՏԻՄ-ում, հատկապես գյուղական համայնքներում էլ. կառավարման բացակայությունը,

¹⁰ Տե՛ս www.mfe.am/index.php?fl=78&lang=1

- պետական կառույցների մասնագետների վերապատրաստման դասընթացների բացակայությունը կամ անբավարար լինելը,

- էլ. կառավարման գործունեության արդյունավետությունը չափելու սանդղակի բացակայությունը,

- հասարակայնության հետ հետադարձ կապի ապահովման այնպիսի կարևոր մեխանիզմի կիրառման բացակայությունը կամ պակասը, ինչպիսին է հասարակական կարծիքի ուսումնասիրումը և այլն:

Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման, նրա հետագա ժողովրդավարացման անհրաժեշտության, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության հաջող իրականացման նպատակով ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման ոլորտում առաջիկա տարիների համար առաջարկում ենք մի մոդել, որը, մեր կարծիքով, իր արդյունավետությամբ կնպաստի քաղաքացիական հասարակության և պետության միջև փոխազդեցությունների նոր ձևերի և մեխանիզմների ամրապնդմանը: Հասարակության վստահությունը կարելի է նվաճել միայն այն դեպքում, երբ պետական մարմինները ձգտում են հասարակությունը կառավարել առավելագույն արդյունավետությամբ՝ տրամադրելով օբյեկտիվ տեղեկատվություն իրենց որոշումների և գործողությունների, երկրում տիրող իրավիճակի մասին՝ հետևելով տեղեկատվության բաց լինելու և թափանցիկ գործունեության սկզբունքներին: Հետևաբար առաջարկում ենք.

- ՀՀ պետական կառավարման արդյունավետության բարձրացման համար ստեղծել էլ. կառավարման *հայեցակարգ*, որը պետք է համախմբի տարբեր գերատեսչությունների էլ. կառավարման գործընթացը և օրենսդրությունը¹¹,

- ՀՀ կառավարության կազմում ստեղծել նոր ստորաբաժանում, որը կհամակարգի հանրապետության ամբողջ տարածքում էլ. կառավարման¹² գործընթացը, կիրականացնի էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգից բխող գործողություններ¹³՝ ունենալով համապատասխան պետական գերատեսչական, մարզային և համայնքային կենտրոններ:

Վերոհիշյալ առաջարկությունները կնպաստեն՝

- «Լավ կառավարմանը», որը ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման կարևորագույն երաշխիք է, ինչպես նաև էլ. կառավարման համակարգի կատարելագործմանը և արդյունավետ կիրառմանը,

¹¹ Տե՛ս «ՀՀ օրենքը էլ. փաստաթղթի և էլ. թվային ստորագրության մասին»՝ ընդունված 14. 12. 2004 թ., <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2252&lang=arm#5>, «ՀՀ օրենքը նույնականացման քարտի մասին»՝ ընդունված 30. 11. 2011 թ., <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4348&lang=arm>, «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի էլ. կառավարման համակարգի ներդրման № 2737-Ա հրամանը»՝ ընդունված 14 հոկտեմբեր 2009 թ., http://www.taxservice.am/Shared/Documents/_TS/Tax_Service_Reform_Projects/hr_hhpekn_2009_2737_A.pdf, «Նոտարիատի բնագավառում էլ. կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը»՝ ըստ ՀՀ կառավարության 2012 թ. մարտ 29-ի № 12 նիստի արձանագրային որոշման, https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR12-6.pdf

¹² Տե՛ս «ՀՀ օրենքը էլեկտրոնային հաղորդակցության մասին»՝ ընդունված 08. 07. 2005 թ., <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2385&lang=arm>

¹³ Տե՛ս «ՀՀ էլեկտրոնային հասարակության հայեցակարգը 2010-2012 թթ.»՝ ընդունված ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 25-ի նիստի № 7 արձանագրությամբ, <http://www.gov.am/files/meetings/2010/4655.pdf>

- էլ. կառավարման ծրագրերի ներդրման ռիսկային հիմնախնդիրների բացահայտմանը,
 - պետական և ՏԻՄ կառուցվածքների միջև սերտ համագործակցությանը՝ նպաստելով ապակենտրոն կառավարմանը,
 - տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման տեսանկյունից ՏԻՄ-երի կարողությունների զարգացմանը,
 - համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորմանը և էլեկտրոնային մասնակցության խթանմանը,
 - համայնքներում ՏՀՏ ներդրման գործում պետական, մասնավոր և միջազգային ռեսուրսների ներգրավմանը, համայնքներում ՏՀՏ ներդրման օրենսդրական, նորմատիվ և մեթոդական կարգավորմանը, տեխնիկական ենթակառուցվածքների ապահովմանը, ՏԻՄ-երում կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրմանը և դրա իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովմանը,
 - կառավարության և մյուս պետական կառավարման մարմինների կողմից լայն որոշումների և դրանց իրականացման քաղաքականության մասին օբյեկտիվ, ամբողջական և օպերատիվ տեղեկատվության տրամադրմանը,
 - քաղաքացիների հետ հետադարձ կապի հաստատմանը՝ իրականացվող պլանների, միջոցառումների և էլեկտրոնային կառավարման ծրագրերի վերաբերյալ առաջարկների, քննադատական մեկնաբանությունների և բողոքների փոխանակման միջոցով,
 - ստացվող հետադարձ տեղեկատվության մշտական վերլուծությանը, ինչպես նաև պետական պաշտոնյաների նկատմամբ հասարակայնության արձագանքների համարժեքության աստիճանի որոշմանը,
 - մարզաբնակների իրազեկման և գիտելիքների բարձրացմանը, որոնք կարող են պարբերաբար տեղեկատվություն ստանալ ՀՀ գործադիր իշխանության գործունեության մասին:
- Ամփոփելով վերոնշյալ առաջարկները՝ կարելի է եզրակացնել, որ հրատապ նշանակություն ունի պետական երկարատև էլ. կառավարման ռազմավարության վերանշակումը, քանի որ ներկայումս գործող ծառայությունները գտնվում են հիմնականում ոչ լիարժեք պայմաններում: Եվ դա այն դեպքում, երբ պետական կառավարման համակարգում էլեկտրոնային կառավարման ծառայությունների հիմնական գործառույթը հանրային քաղաքականության իրականացման գործում արդյունավետ կառավարման ռեսուրսների օպտիմալ կիրառումն է, երբ ապահովվում է պետական, կորպորատիվ և մասնավոր շահերի փոխհամաձայնեցումը:

ЭДГАР КАЛАНТАРЯН – *Нынешнее состояние электронного управления и перспективы его развития в РА.* – Развитие системы управления предполагает структурные и функциональные преобразования в этой сфере. Необходимость реформировать её возникла в результате распада Советского Союза и перехода к рыночной экономике. Функциональные реформы последних лет обеспечили значительный прогресс в этой области. Стремительное развитие информационных технологий, в частности Интернета, сближает общество и государство, укрепляет связи

между ними. Это и побудило внедрить в государственное управление новые методы. Несмотря на ощутимый прогресс по предоставлению электронных услуг, Армения ещё значительно отстаёт от стран ЕС. В этой связи мы предлагаем новую модель управления, заметно превосходящую своей эффективностью нынешнюю.

EDGAR KALANTARYAN – *The Current Situation of E-Governance and the Perspectives of its Development in RA.* – The development of the system of governance implies structural and functional reforms in public administration. In the recent years, the functional reforms in the system of state governance have resulted in considerable progress. In RA the need for reforms in the public administration sphere arose due to the collapse of the Soviet Union and transition to the market economy. The rapid advancement of information technology and the Internet served as a new basis for strengthening the interrelation of state and society, which, in turn, increased the significance of the new methods of state governance. Despite the impressive progress recorded in the sphere of e-governance, Armenia is still a long way from the EU countries in terms of electronic public services delivered. Acknowledging this fact, we propose a new model of e-governance, which will surpass the current one in efficiency.